



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2017/10/2

2017/10/2

616 957

V-49

30 JUL 2000

016.957
Մ-49

Պոլիտարհիտի բոլոր լեզուների միացեալ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՑՈՒՆ Հ. Հ. ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ № 2

ԲԺ. Ա. ԼԵՆԻՆՔՅԱՆ

ՄԻՓԻԼԻՍ



ՅԵՐԵՎԱՆ
1925

10
4-ՄԵ

2005 JUL 0 8

27 JUN 2013

610
144-ՆԵ

616.957

Պրոֆեսարներ բոլոր լեկերների միացեմ.

Ն-49

այլ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Շ. Շ. ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ № 2

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

1003
10277

ՄԻՓԻԼԻՍ



Յ Ե Ր Ե Գ Ս Ե
1925

010 7500/1
ՍՅ-ՎՎ

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս

ԻՆՉ ՏԵՍԱԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Վեներական ախտերից ամենավտանգավորը սիֆիլիսն է, վորովհետև բացի հիվանդից առողջին անցներուց նա անցնում է և ժառանգաբար, այսինքն՝ հորից ու մորից անցնում է դեռ չըծնված ժառանգին:

Սիֆիլիսը շատ հին հիվանդությունն է. մարդիկ սկսեցին ուշադրություն դարձնել նրա վրա միայն սրանից 400 տարի առաջ, յերբ Յեվրոպայում անաղին զոհեր տարավ: Առաջ ուրիշ անունն ուներ այդ հիվանդությունը, բայց այժմ բոլոր յերկրներում էլ ընդունված է սիֆիլիս կոչել նրան:

Սիֆիլիսը շատ տարածված հիվանդությունն է. վորքան տղետև ազգարնակությունը, այնքանել շատ տարածված է նրանց մեջ այդ հիվանդությունը. կան այնպիսի տեղեր, վորտեղ 100 հոգուց 15 հիվանդեն սիֆիլիսով. կան և այնպիսի տեղեր, վորտեղ ամեն ընտանիքում դրանով հիվանդ կա:

ՍԻՖԻԼԻՍԻ ՄԱՆՐԵՆ

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունները, սիֆիլիսն էլ ունի իր մանրին: Այդ մանրենները շատ փոքր են,

Գրառ. № 1639.

Տիրաժ 1000.

Պատ. № 1557.

Տպագրական արևստի 2-րդ տպարան, Յերևան.

հասարակ աչքով անտեսանելի. խոշորացույցով կամ մանրադիտակով 1000 անգամ և ել ավելի մեծացնելուց հետո միայն կարելի լի տեսնել այդ մանրեն, վորը նման խցանահանի, միայն յերկար տեսակի և բարակ սլառտակներով: Այդ մանրեն կոչվում են գծուլն սպիրոխեա:

Սիֆիլիսի մանրեն գտնվում է հիվանդի արյան մեջ, նրա մարմնի վրայի խոցիկները և բշտիկները, արտաթորության ու թարախի մեջ. վարակվելու համար անհրաժեշտ է, վոր մանրեն անցնի հիվանդից առողջին. մանրեն ընկնում է առողջ մարդի մարմնի մի վորևե տեղի քերծվածի վրա ու վարակում նրան, անցնելով ետ քերծվածից արյան մեջ.

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՍԻՓԻԼԻՍՈՎ

Սիֆիլիսով կարելի լի վարակվել թե սեռական և թե արտասեռական ուղիով, որինակ՝ համբուլքի, գգալի, սրբիշի, բաժակի միջոցով. հիվանդի բերանում կան խոցիկներ և ինքը չը գրաս, վոր ետ խոցիկները սիֆիլիսային են. նույնպես չը գրաս, վոր իր թուքի մեջ կան սիֆիլիսային մանրեններ-սպիրոխեաներ. նա համբուլքում է առողջին. հիվանդի թուքից մի կաթիլ կարող է ընկնել առողջի շրթունքի քերծվածի վրա, կամ բերանի մեջ գտնվող մի վորևե քերծվածի վրա. դրանից հետո առողջն ևս վարակվելու է:

Նույնպես շատ տարածված է ուրիշի գլանակ ծխելը, ուրիշի ծխամորճը (չիբուխը) բերան գնելը, ուրիշի գգալով սւտելը, ուրիշի սրբիշով սրբվելը. հիվանդի թուքի մի կաթիլ կարող է մնալ գգալի, գլանակի վրա և վարակել առողջին: Շատ կանայք սիրում են ուրիշի յերեխային ծիծ տալը, մանավանդ յերբ յերեխան մայր շունի. յեթև

նորածին յերեխան հիվանդ է սիֆիլիսով, նա անպատճառ կը վարակի իրեն ծիծ տվողին. այդ տեսակ զեպքեր գյուղերում շատ են պատահում:

Բայց ավելի շատ համբուլքի միջոցով է անցնում սիֆիլիսը յերեխաներին. հայտնի լի, վոր յերեխաների կաշին շատ նուրբ է և շատ շուտ քերծվածներ է ունենում. համբուլքը, յեթև հիվանդ է սիֆիլիսով, ընծայի փոխարեն սիֆիլիս և տալիս անմեղ յերեխային: Բայց գա հերիք չէ. սիֆիլիսն անցնում է և գանազան իրերի ու դործիքների միջոցով, յեթև նրանց վրա ընկել է հիվանդի թուքը կամ խոցիկի արտաթորությունը:

Մեզնում հյուաններն յեվ կոչկակարները սովորություն ունեն աշխատանքի ժամանակ բերանը մեխեր գնել. մեխի գործարանում կամ միկնույն բանատեղում մի վորևե հիվանդ թողել է իր թուքը մեխի վրա, առողջը այդ կեղտոտ մեխը բերանը գնելիս վարակվում է սիֆիլիսով:

Գերձակներն ու կարանոց կանայք ել միշտ գնում են իրենց բերանը քորոց, կամ տեղ. դրանցից մեկն ու մեկը կարող է հիվանդ լինել և, կեղտոտելով քորոցներն ու ասեղները, վարակել ուրիշներին:

Ռուսաստանում այդ ձևով ստացած սիֆիլիս շատ կա:

Առհասարակ սիֆիլիսով հիվանդների կիսից ավելին արտասեռական ճանապարհով է հիվանդանում. և այդ տեսակ սիֆիլիսն ավելի փսանգավոր է այն պատճառով, վոր յերկար ժամանակ նա չի խմացվում: մինչև անգամ չեն կասկածում այդ տեսակ հիվանդները, վոր իրենք սիֆիլիս ունեն, չեն բժշկվում և հեշտությամբ վարակում ուրիշներին, մտնավանդ իրենց մերձավորներին:

Այդ է պատճառը, վոր կան գյուղեր, վորտեղ ազգաբնակչությունը ամբողջովին հիվանդ է սիֆիլիսով:

Հայաստանում ել շնորհիվ վերջին պատերազմի շատ ե տարածված սիֆիլիսը. մեզնում ել կան գյուղեր, վորտեղ ազգաբնակչության յերեք քառորդը տկար ե սիֆիլիսով. այդ գյուղերում կան ընտանիքներ, վորոնք զլխովին հիվանդ են սիֆիլիսով: Ի հարկե մեր գյուղերում ել հիվանդների մեծ մասը արտասեռական ճանապարհով ե ստացիլ ետ հիվանդությունը: Այս հանգամանքը մեծ կապ ունի գյուղացու նիստ ու կացի հետ ե դրա համար ել այդ տեսակ սիֆիլիսը կենցաղային ե կոչվում:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄ

Սեռական ե վոչ սեռական ուղիով ստացած սիֆիլիսը կոչվում ե ստացական սիֆիլիս ի—զանազանություն ժառանգական սիֆիլիսից, յերբ յերեխան մոր արգանդումն ե ստանում սիֆիլիսը հորից կամ մորից: Ժառանգական սիֆիլիսոտ յերեխան չի աճում արգանդում, մեռնում ե ե շատ շուտ վիժվում. յեթե հիվանդությունը շատ ուժեղ չե, յերեխան կարող ե աճել, ժամանակին ծնվել, բայց շատ շուտ մեռնում ե ներքին գործարանների սիֆիլիսային խանգարումներից:

ՍԻՖԻԼԻՍԻ ՆՇԱՆՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԽՄՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

Սիֆիլիսի նշաններն անմիջապես չեն յերևում. վարակելուց հետո մի վորոշ ժամանակ ե անցնում ե ապա հայտնվում ե հիվանդությունը: Վարակման որից մինչև առաջին նշանների յերևալը կոչվում ե սիֆիլիսի զաղանի կամ խմորման շրջան. յուրաքանչյուր վարակիչ հիվանդու-

թյուն ունի իր շրջանը, վորը յերկար կամ կարճ ե լինում, նայած հիվանդությանը.

Սիֆիլիսի խմորման շրջանը մոտ 4 շաբաթ ե. այսինքն՝ վարակման որից մինչև առաջին նշանի յերևալը 4 շաբաթ ե տևում.

Առողջ մարդը ունենում ե սեռական հարաբերություն մեկ հիվանդի հետ, կամ անզգուշարար համբուրվում ե մեկ հիվանդի հետ. առողջի քերծվածի վրա ընկնում են հիվանդի թուքի հետ ե սիֆիլիսի մանրէները, սպիրոխետները, վորոնք շատ շուտ անցնում են արյան մեջ. այդ սրվանից արդեն առողջը վարակված ե, բայց նա դեռ վոչինչ չի զգում.

Հիվանդության նայանվելու համար անպատճառ հարկավոր ե վոր մի վորոշ ժամանակ անցնի, վորպեսզի մանրէները բալմանն յեվ սկսեն ներգործել վարակվածի վրա:

Վոչ մի մտնրե ի վրճակի չե իսկույն ե յեթ հիվանդություն առաջ բերելու, դրա համար վորոշ ժամանակ ե հարկավոր.

Յեվ սիֆիլիսի մանրէի, սպիրոխետի համար այդ ժամանակը 4 շաբաթ ե:

ԿՈՇՏ ԵԱՆԿՐ

Խմորման շրջանն անցնելուց հետո սպիրոխետի մրտած տեղը մի փոքր կարմրում ե. հետևյալ որը այդ կարմրած տեղում պզուկ ե գոյանում, մի շատ հտտարակ ու սովորական պզուկ. վոչ ցավում ե դա, վոչ քոր գալիս. մի յերկու որից հետո պզուկի վրայի կլեպը պլոկվում ե ե տեղը փոքրիկ խոց ե բացվում.

Յերբեմն այդ խոցն այնքան փոքր, այնքան աննշան ե լինում, վոր հիվանդն մինչև անգամ չի նկատում, վոր

խոց ունի: Խոցի վրա թարախ չը կա. նրա հատակը պղնձագուլն կարմիր է, իսկ կողերը մաքուր և հափասար — մի բան է միայն նկատելի՛ դա խոցի հատակի, կողերի և շրջապատի կոշտութունն է, ինչպես կռճիկ՝ աճառ:

Այ նենց դրա համար ել ետ առաջին խոցը, վորը յեղ սիֆիլիսի առաջին նշանն է, կռչկում և կռչա, կամ կարծր շանկր — ի գանագանություն փափուկ շանկրից:

Սիֆիլիսի այդ առաջին նշանը, կռչա շանկրը, հայտնվում է այնտեղ, վորտեղից մտել է նրա մանրեն՝ սպիրտ-խեար:

Յեթե հիվանդը սեռական հարաբերութեան միջոցով և վարակվել, շանկրը սեռական գործարանների վրա և հայտնվում:

Յեթե գրգռի, բաժակի կամ ծխախոտի միջոցով և վարակվել, այդ դեպքում շանկրը հայտնվում և շրթունքների վրա, կամ քերանի մեջ, լեզվի վրա, նշագեղձի վրա:

Բոլոր հիվանդների շանկրները միատեսակ չեն. միայն կոշտութեամբ են նրանք միմյանց նման, իսկ մյուս հատկութուններով նրանք նման չեն.

Մեկ հիվանդի շանկրը կարող է մեծ լինել, մյուսինը փոքր. մեկինը կարող է կլեզով ծածկված լինել, մյուսինը վոչ. մեկի շանկրը կարող է կեղտոտ ու գարշահոտ հեղուկ մինչև անգամ թարախ սալ, իսկ մյուսի շանկրը վոչ. մի խոսքով ինչքան հիվանդ կա, այնքան տեսակ շանկր կա. դրա համար ել շատ հաճախ միայն փորձված բժիշկն է կարողանում շոկել ու իմանալ թե ումը ինչ շանկրն է:

Այդ և պատճառը, վոր շատ ու շատ հիվանդներ չեն նկատում իրենց շանկրը և ժամանակին չեն դիմում բժշկին ու շարաշար տուժում են իրենց անփութութեան ու տգիտութեան համար:

Շանկրի արտաթորութեան մեջ կամ նրանից վերցրած մի կաթիլ հեղուկի մեջ կան սպիրոխեաներ, վորոնց տեսնելու համար պեար է արտաթորութեան կամ հեղուկի մի կաթիլը մանրօգիտակով գննել նախորոք պատրաստելուց հետո:

ՇԱՆԿՐԻ ԸՆԹԱՅԸ

Յեթե հիվանդը շանկրի յերևալուց հետո անմիջապես դիմում է բժշկին, շատ շուտ առողջանում է. շանկրի առողջացած տեղը սպի է գոյանում, վորն յերկար ժամանակ նկատելի չէ լինում:

Իսկ յեթե ընդհակառակը հիվանդ անփութ է գրտնվում, ու չի դարձնում, ու չի բժշկվում, շանկրը շեղվում է իր կանոնավոր ընթացքից՝ նա խոր և ընկնում, մեծանում է, սկսում է ցավալ, կեղտոտ ու գարշահոտ հեղուկ կամ թարախ և տալիս, հիվանդի գրությունը որեցոր վատանում է. նա նիհարում է ու գեղնում, գլուխը ցավում է, ախորժակից զրկվում, ուժերն այնքան են պակասում, վոր ծանր հիվանդի կերպարանք է ստանում և անկողին մտնում:

Հասարակութեան մեջ տարածված է այն սխալ կարծիքը, վոր շանկրի կանոնավոր չը բժշկվելուց, կամ նրան անփութ վերաբերվելուց և հիվանդութունը փոխվում սիֆիլիսի:

Շատ հիվանդներ ել այն կարծիքի են թե՛ բժիշկն է մեղավոր այն բանում, վոր շանկրը սիֆիլիսի է փոխվել. նրանց կարծիքով յեթե բժիշկն ուզենար, կամ յեթե նա լավ բժշկեր, շանկրից հետո սիֆիլիս չեր լինի:

Բայց դա սխալ է.

Սիֆիլիսը շանկրի յերևալուց ⁴ շարաթ առաջ և մտել

հիվանդի մարմինը, հիվանդն 4 շաբաթ առաջ և վարակվել:

Սիֆիլիսը այրան հիվանդությունն է, ապա ուրեմն և ընդհանուր կազմվածքի հիվանդությունն է և վոչ աեղական:

Շանկրը սիֆիլիսի առաջին նշանն է, յերբ կա շանկր, կը նշանակի հիվանդն ունի սիֆիլիս, վորը նենց շանկրով է նայտնվում:

Շանկրը սիֆիլիսի առաջին փուլի նշանն է, վորն նայտնվում է հիվանդությունից խմորման շրջանն անցնելուց նետո:

Յեթե հիվանդն հենց շանկրն յերևալու որից է բրժշկվում, ամեն բան հենց շանկրով էլ վերջանում է. իսկ յեթե չի բժշկվում, վոչ մի կերպ չի կարելի սիֆիլիսի առաջն առնել, վորովհետև սիֆիլիսը սկսվում է նենց վարակման որից:

Վերոգրյալ սխալ կարծիքը մեծ թյուրիմացությունների պատճառ է դառնում ու ցավալի հետևանքներ առաջի:

ԱՎՃԱՅԻՆ ԳԵՂՁԵՐԻ ՌԻՌԵԼԸ.

Կոչա շանկրի յերևալուց մի քանի որ հետո մտառկա գանվող գեղձերը սկսում են ուռել և մեծանալ, բայց առանց ցավի և շատ էլ դանդաղ:

Սիֆիլիսի մանրեն կաշվի քերծվածից մանում է հիվանդի արյան մեջ ավշային անոթների և գեղձերի միջոցով, ավիշը հեղուկ է, վոր յուրաքանչյուր կենդանի ունի. այդ հեղուկը հավաքվում է մարմնի գանազան մասերից, լցվում է բարակ անոթների մեջ, սրանք էլ մեծերի մեջ ու հետո խառնվում են արյան հետ: Ավշային հեղուկը նախ քան արյան մեջ թափվելը անցնում է գեղձերի միջով, գեղձերը մարմնի ինքնապաշտպանություն համար են.

ավշային հեղուկը իր միջի կեղտոտ և թունավոր մանրենքը թողնում է գեղձերի մեջ, մաքրվում ու հետո թափվում արյան մեջ:

Առհասարակ մարդի մարմնի մի վորեե տեղ վարակիչ խոց յերևալիս մտառկա գեղձերը ուռում են.

ՄՈՏԱԿԱ ԳԵՂՁԵՐ Ի ՌԻՌՈՒՄԸ.

Սիֆիլիսի ժամանակ էլ գեղձերն ուռում են, միայն այն դանազանությամբ, վոր այս դեպքում ուռում են մի քանի գեղձեր միասին յեւ ընդունում են նամրիչի տեսք. և այս բանը այնքան բնորոշ է, վոր հենց միայն էս նշանի հիման վրա առանց կասկածելու պետք է ընդունել յերևացած շանկրը—սիֆիլիսային շանկր և սկսել սիֆիլիսին հասուկ բժշկությունը:

Վոչ մի հիվանդության պեպքում գեղձերը համրիչի տեսք չեն ընդունում: Յերբ առնանդամի վրա կա խոց ու աճուկի գեղձերն էլ մեծացել են, չեն ցավում, չեն թարախոտում, համրիչի ձևին, կը նշանակի, վոր սիֆիլիսի հետ զործ ունենք, վոր հիվանդն անկասկած սիֆիլիս ունի:

Բացի այդ չը պետք է մոտանալ և հետևյալ հանգամանքը. վորտեղից մտել է սիֆիլիսի մանրենն՝ այդ տեղի մտառկա գեղձերն էլ ուռում են:

Յեթե մանրեն ընկել է սեռական գործարանների վրա, շանկրը սեռական գործարանների վրա յե և ուռում են աճուկների գեղձերը, յեթե շանկրը սեռական գործարանների աջ կողմումն է, ուռում են աջ աճուկի գեղձերը, յեթե շանկրը ձախ կողմումն է, ուռում են ձախակողմյան աճուկի գեղձերը. յեթե շանկրը մատի 'ա յե, ուռում են միկնույն ձեռքի արմունկի գեղձերը, յեթե շանկրը բերանի մեջն է, ուռում են ներքին ծնոտի տա-

կի գեղձերը. յեթե շանկրը թշի կամ շրթունքի վրա յե, ուռում են պարանոցի միկնույն կողմի գեղձերը. բայց յերբեմն շանկրը ձախ կողմումն է լինում, իսկ ուռում են աջ կողմի գեղձերը—սա կոչվում է խաչածն ուռումն, վորը շատ բիչ է պատահում կոշտ շանկրի ժամանակ:

ՀԵՌՈՒ ԸՆԿԱՄ ԳԵՂՁԵՐԻ ՈՒՌՈՒՄԸ.

Մի ուրիշ հատկութիւնն էլ ունեն սիֆիլիսով հիվանդի գեղձերը. դա նա է, վոր սիֆիլիսով հիվանդի մարմնի ուրիշ տեղի գեղձերն ևս ուռում են և այդ գեղձերը յերկար ժամանակ ուռած են մնում. հիվանդութիւնը հինացել է, հիվանդը վաղուց է հիվանդ. թե կաշվի վրա և թե մի ուրիշ տեղ հիվանդութեան հետք չկա, միայն գեղձերն են մեծացած. և սա ցույց է տալիս, վոր հիվանդը տկար է, կամ յերբեկիցե յեղել է տկար սիֆիլիսով:

Բանը նրանումն է, վոր քանի հիվանդութիւնը նոր է, ուռում են վարակված տեղի մոտ գտնվող գեղձերը. իսկ յերբ հիվանդութիւնը հնանում է, հիվանդի մարմնի բոլոր գեղձերն էլ ուռում են, յերկար ժամանակ մնում են ուռած և մասնում հիվանդին:

Բոլոր գեղձերի ուռումը նույնպես ընտրուշն սիֆիլիսի համար:

Յեթե մեկն ու մեկի բոլոր գեղձերն ուռած են, անպատճառ պետք է նրան հարց տայ, չի ունեցել արդյոք, կամ չունի հենց այժմ սիֆիլիս. յեթե նա բացատի, պետք է առաջարկել նրան արյունը կամ վողնուղեղի միջի հեղուկը հետազոտել տայ:

Յերբ բացասական հետեանք տա այդ հետազոտութիւնը, այն ժամանակ կարելի յե հավատալ նրան. իսկ յեթե այդ հետազոտութիւնը ավելց ընհակառակը զրա-

կան հետեանք, այն ժամանակ հիվանդը պետք է անմիջապէս սկսի բժշկվելը, վոր չը սուժի ապագայում:

ՈՒՌԱՄ ԳԵՂՁԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սիֆիլիսի հատկութիւնն այն է, վոր նա կարող է յերկար ժամանակ թաքնված մնալ և 5 տարուց կամ 10 տարուց հետո գաղտագողի ձևով հայտնվել և ահագին քայքայութիւններ ու վնասումներ տալ:

Կանոնավոր և լավ բժշկվելու դեպքում գեղձերի ուռումն անհետանում է և գեղձերն չեն շոշափվում:

Ապա ուրեմն յուրաքանչյուր հիվանդ պետք է ունենա այն գիտակցութիւնը և բժշկվի, վոր գեղձերի ուռումն անհետանա, հակառակ պարագայում նրա հիվանդութիւնը յերկար է շարունակվելու, ապագայում զրգվար է բժշկվելու և այդ հիվանդը միշտ էլ վասնզ է սպաննալու իր շրջապատողներին և մերձավորներին վարակելու տեսակեալից:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է շուտ շուտ քննել տա իր արյունը, վորպեսզի ինքը հավաստիացած լինի իրոր ինքըն առողջ է թե տկար:

ՅԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԿ,

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄՈՐՄԱՆ ԶԵՂԱՆ.

Կոշտ շանկրը սիֆիլիսի առաջին շրջանն է, կամ փուլը: Շանկրի առողջանալուց մի վորոշ ժամանակ անցնելուցհետո են հայտնվում յերկրորդ շրջանի (փուլի) նշանները: Ինչպէս վոր կոշտ շանկրից առաջ յեղած ժամանակը կոչվում է խմորման շրջան, այնպէս էլ կոշտ շանկրից հետո մինչև յերկրորդ շրջանի նշանների յերևալը

յեղած ժամանակն ել կոչվում ե խմորման շրջան. և ընդունված ե այս ժամանակը անվանել յերկրորդ խմորման շրջան:

Այս շրջանն ել տեւում ե մոտավորապես 4 շաբաթ. բայց յերբեմն և ուշ ե հայտնվում.

Յերբեմն պատահում ե, շանկրը շուտ չի առողջանում, յերկար ե քաշում. այդ ժամանակ յերկրորդ փուլի նշանները շուտ են գալիս և յերկրորդ խմորման շրջանը աննկատելի յե անցնում:

Ընդհանրապես յերկրորդ փուլի նշանները յերևան են գալիս շանկրի առողջանալուց մի վորոշ ժամանակ անցնելուց հետո:

Շանկրի առողջանալուց հետո հիվանդը մի առ ժամանակ իրեն շատ լավ ե զգում, նույնիսկ այնքան լավ, վոր նա մինչև անգամ չի հավատում, վոր իր խոցը կոշա շանկր ե յեղել: Բանն ել հենց նրանուամն ե, վոր շանկրն առողջանում ե, իսկ հիվանդը վրջ. հիվանդությունը լուել ե միայն ժամանակավորապես և իր ժամանակին հատնվելու ե:

ՍԴԻՐՈՒՄԵՏՆԵՐԻ ԲԱԶՄԱՆԱԼԸ.

Շանկրից հետո սպիրոխեաները, սիֆիլիսի մանրեաները, ավշային մոտակա ուռած գեղձերից անցնում են արյանը, եզ սպիրոխեաները արյան հետ շրջում են հիվանդի մարմնի մասերը կիսվում են այս ու այն մասի մեջ, որինակ՝ կաշվի, բերանի, ներքին գործարանների մեջ և սկսում են աճել ու բազմանալ:

Քանի քիչ են նրանք, միայն շանկր են առաջացնում բայց աճելուց ու բազմանալուց հետո նրանք վողողում են ամբողջ արյունը և թունավորում ամբողջ կազմվածքը,

անա և այդ ժամանակամիջոցը, յերկրորդ խմորման շրջանը սպիրոխեաների բազմանալու և ընդհանուր կազմվածքի վարակելու համար ե:

ՅԵՐԿՐՈՐԳ ՓՈՒԼԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Յերկրորդ փուլի նշաններն ամենևին կախում չունեն շանկրից: Մեծ եր թե փոքր շանկրը, յերևում եր նա թե բոլորովին աննկատելի յեր, միևնույն ե հայտնվելու են և և փուլի նշանները շուտ կամ ուշ:

Այդ նշանների հայտնվելուց մի քանի որ առաջ հիվանդն սկսում ե տաքացնել, զլուխը ցավում ե, մարմինը կոտրատվում, տրամադրությունը վատ ե, աշխատել չի կարողանում:

ԲՄԵՐ ՅԵՎ ԲՇՏԻԿՆԵՐ.

Յերեք որից հետո հիվանդը իր կաշվի վրա նկատում ե ինչ վոր բծեր ու սլուտեր, զրանք կարմրագույն են, քոր չեն գալիս, կաշվից բարձր չեն ու չեն անհանգստացնում հիվանդին:

Մի քանի որից հետո այդ բծերն ու սլուտերն անցնում են կամ սպրռում, այնպես վոր հաճախ հաղիվ նշմարելի են լինում:

Իեռ զրանք շանցած հիվանդի մարմնի զանազան տեղերում կաշվի վրա, բերանի մեջ, քթի մեջ, բկի ու կոկորդի մեջ հայտնվում են զանազան մեծության բշտիկներ, վորոնք ծածկված են բարակ կլեպով, այդ կլեպը շատ շուտ պոկ ե գալիս և բշտիկը խոցիկի ե փոխվում: Մի քանի որից հետո զրանք չորանում են ու տափականում, բայց նորերն են զուրս գալիս:

Այդ բշտիկներն զանազան մեծության են, մի քա-

նիսը կորեկի չափ են, մի քանիսը վոսպի, մի քանիսն ել սիսեռի. դրանց մի մասը չորացել է, իսկ մյուսն ել նոր է դուրս գալիս: Այնպես վոր միևնույն ժամանակ մի հիվանդի վրա կարելի յե աեսնել բազմաաեսակ նշաններ՝ բծեր, բշտիկներ, խոցիկներ, մանր կոշտուկներ:

Յուրաքանչյուր տեսակն իր սիրած տեղն ունի մարմնի վրա. որինակ՝ բծերն ու պուտերը դուրս են գալիս փորի, կողերի և կրծքի վրա. բշտիկները ճակատի վրա մազերի մոտ, իսկ խոցիկները գլխի մազերի և հոնքերի մեջ:

Յերբեմն բծերն ու պուտերը, խոցիկներն ու բշտիկներն այնքան քիչ են լինում, վոր միայն փորձված բժշկը կարող է ջոկել ինչ են դրանք: Շատ անգամ բշտիկները դուրս են գալիս մարմնի այնպիսի տեղերում, վորոնք կպչում են միմյանց սրինակ՝ սեռական գործարանների վրա, փոշտի վրա, ազդրների վրա, շքի վրա, կոնաաակին, կանանց սախնքների տակ (ծծերի) և այլն... Յերբ այդ բշտիկները դուրս են գալիս շրթունքների վրա կամ բերանի անկյունում, թուքից ավելի գոգովում են ու շատ անհանգստացնում հիվանդին. կան այնպիսի բբշտիկներ, վորոնք գարշահոտ հեղուկ են արտադրում. այդ հեղուկը յերբեմն շուտ չորանում է բշտիկի վրա, բայց յերբեմն ել գոգուում է բշտիկի շուրջը գանվող աուղջ կաշին և նոր բշտիկների պատճառ դառնում:

Բշտիկների նեղուկի յեվ խոցիկների թարախի մեջ միշտ ել կարելի յե գանել սիֆիլիսի մանրեններ՝ սպիրտիւեսաներ:

Բշտիկները դուրս են գալիս վոչ միայն կաշվի վրա, այլև բերանի, քիթի մեջ, բկի և կոկորդի մեջ. հայտնվելով այս վերջին տեղերում, բշտիկները գանագան խանգա-

րումներեն առաջ բերում, վորոնք չեն անցնում, մինչև վոր հիվանդը չի սկսում կանոնավոր բժշկվելը:

Իսկ յեթե հիվանդը կանոնավոր բժշկվում է, նեց կոշտ շանկրից նետո, այն ժամանակ սիֆիլիսի յերկրորդ փուլի նշաններից վոչ մեկն ել չի յերևում. և հիվանդը ազատ է լինում այդ նշանների հասցրած խանգարումներից և վնասներից:

ՄԱՋԵՐԻ ԹԱՓՎԵԼՆ ՈՒ ՎՈՍԿՐԱՄԻՋԻ ԲՈՐԲՈՒՄԸ.

Յերկրորդ շրջանի գլխավոր նշաններից մեկն ել հիվանդի մազերի թափվելն է և ուժեղ վոսկրացավը, այս վերջինն առաջ է գալիս վոսկոռների վրայի թաղանթի բորբոքումից:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ՆՇԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՆԱԸ.

Շատ քիչ հիվանդներ կան, վորոնք սկսում են բժշկվելը հենց կոշտ շանկրից հետո. միայն յերկրորդ շրջանի նշաններն են ստիպում բժշկվելը. այդ ժամանակ ինքը հիվանդն ել հավատում է, վոր տկար է սիֆիլիսով և սկսում է կանոնավոր բժշկվելը: Յերբ հիվանդն անփույթ է վերաբերվում, յերկրորդ շրջանի նշանները գնալով գարգանում են և գանագան խանգարումներ առաջ բերում, նայած թե՛ մարմնի վոր մասն է ավելի վնասված. յեթե կոկորդն է վնասված, հիվանդի ձայնը բոլորովին կարվում է, յեթե մազերն են վնասված, գլխի մազերը թափվում են և հիվանդը ճաղատանում է. նա այլանդակ կերպարանք է ստանում, յերբ թափվում են հոնքերն ու արտևանուռները, Յեթե վոսկրամիզն է վնասված, վոսկրացավը հանգստություն սխառտի հիվանդին:

Ինչպես վոր չի կարելի յեզատել հիվանդի ժամա-

1003
1027



նակ կարող ե տեսլ կոշտ շանկրը, նույնպես ել չի կարելի իմանալ թե՛ վորքան ժամանակ կարող ե տեսլ և յերկրորդ շրջանը

Ընդհանրապես յերկրորդ շրջանը տեսում ե շատ յերկար տարիներ. հիվանդութիւնը յերբեմն թագնավում ե ու անհետանում, յերբ բժշկվում ե հիվանդը, և մի առ ժամանակից հետո դարձյալ հայտնվում, յեթե հիվանդը կանոնավոր չի բժշկվում. իսկ ընդհակառակը յերբ հիվանդը բժշկվում ե կանոնանավոր, այդ նշանները անհետանում են անդարձ կերպով:

ՀԻՎԱՆԴԻ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս շրջանի ամբողջ ընթացքում հիվանդը սաստիկ վարակիչ ե. նա շատ հեշտութեամբ կարող ե վարակել իր շրջապատողներին ու մերձավորներին:

Վարակելու տեսակեանք ամենավտանգավորը յերկրորդ շրջանն ե, վորովհետև այդ ժամանակ սպիրոխետները մի առանձին հատկութիւն ունեն թե վարակելու և թե աճելու ու բազմանալու:

Յուրաքանչյուր հիվանդ պետք ե այնքան գիտակցութիւն ունենա, սկսել բժշկութիւնը հենց կոշտ շանկրից յեվ բժշկվել կանոնավոր ձեով յեվ չսպասել յերկրորդ շրջանի նշանների յերևալուն: Շատերը սպասում են յերկրորդ շրջանի նշանների յերևալուն, կամ բժշկվում են միայն այն ժամանակ, յերբ նշանները դուրս են գալիս և դադարեցնում են բժշկութիւնը, յերբ նրանք անհետանում են:

Յուրաքանչյուր հիվանդ պետք ե բժշկվի վոչ թե միայն իր կորցրած առողջութիւնը ձեռք բերելու համար, այլ և նրա համար, վոր նրա արյունը մաքրվի, վոր չվարակի ուրիշներին և շանքադասցնի նրանց:

ժառանգներին անցնելու տեսակետից ել այս շրջանի սիֆիլիսը նույնպես վտանգավոր ե. յերկրորդ շրջանի սիֆիլիսով հիվանդները միշտ ել ունենում են սիֆիլիսով հիվանդ ժառանգներ, վորոնք հենց մոր արգանդում մեռնում են և վիժվում կամ ծնվում են սիֆիլիսային բշտիկներով ու խոցիկներով և շատ շուտ մեռնում: Քանի կատարելապես չի բժշկվել հիվանդը նա միշտ ել հիվանդ զավակներ ե ունենալու, վորոնք շուտ մեռնելու յեն: Սիֆիլիսի պատճառով քայքայվում ե ընտանիքը յեվ այլատեսովում:

ՅԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ ԿԱՄ ԳՈՒՄՄԱՆԵՐԻ ՇՐՋԱՆ

ՅԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Հիվանդի կաշվի վրա, քթի և բերանի մեջ, բլի և կոկորդի մեջ, ստամոքսի և աղիքների մեջ, մկանունքների և վոսկոռների մեջ, արյան մեծ զարկերակի և սրտի մեջ և առհասարակ բոլոր գործարանների մեջ, նույնիսկ գլխի ուղեղի և վոյնուղեղի մեջ հայտնվում են փոքրիկ ուռուցքներ, վորոնք սկզբում կոշտ են լինում, բայց հետո փափկում են և լցվում թարախանման թանձր հեղուկով:

Մի առ ժամանակից հետո այդ ուռուցքները պատռվում են և զանազան խանգարումներ ստալ բերում. նայած թե՛ վոր գործարանի մեջ են գոյացել նրանք:

Վորտեղ գոյանում են այդ ուռուցքները, այն գործարանը խոցոտվում ե ու պատռվածներ տալիս. որինակ, յեթե այդ ուռուցքը բերանի մեջն ե, քիմքի վրա, շատ շուտ քիմքը պատռվում ե և քթի խոռոչն ու բերանը միանում են: Յեթե քթի վրա ե դուրս յեկել այդ ու-

ուսցքը, քիթը շատ շուտ նստում և ու ազեղացնում հի-
վանդին, կամ բոլորովին բաց և մնում քիթի տեղը և հի-
վանդը դառնում և պնչատ. յեթե սրտի մեջ և գոյացել
այդ ուսուցքը, սիրտը շատ շուտ պատուվում և հիվանդը
անմիջապես մեռնում, հանկարծամահ լինում:

Այդ ուսուցքը լատիներեն գումմա յե կոչվում և
զբա անուկով ել կոչվում և յերբորդ փուլը՝ գումմաների
շրջան:

Այդ գումմաների պատճառը հետևյալն է՝ սպիրիտու-
ները, կիտվելով մի վորեե գործարանում բուն են գնում
այդտեղ և ուսուցքներ առաջացնում. գործարանը խո-
ցոտվում և և զանազան քայքայումներ առաջ բերում հի-
վանդի մարմնի մեջ:

Գլխի ուղեղի մեջ գոյացած ուսուցքները ամենից
վտանգավորն են, վորովհետև գլխի ուղեղի մեջ են գետեղ-
ված մարդի մարմնի բոլոր գործարանների կառավարող
տեղերը, վորտեք կենտրոն են կոչվում. վոր գործարանի
կենտրոնը վնասված և, այն ել խանգարվում է. յեթե
աչքի կենտրոնումն և գուրս յեկել այդ ուսուցքը, հիվանդը
կզրկվի տեսողությունից. յեթե ականջի կենտրոնումն և
գուրս յեկել, հիվանդը կզրկվի լսելուց:

Բոլոր գործարանների մեջ ել կարող են գոյանալ այդ
տեսակ ուսուցքներ:

ԳԼՒՒ ՈՒՂԵՂԻ ՅԵՎ ՎՈՂՆՈՒՂԵՂԻ ՏՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերբորդ շրջանում, գլխի ուղեղի և վորնուղեղի մեջ
բացի գումմաներից, վերը նկարագրած ուսուցքներից,
առաջ են գալիս և գուտ ներվային հիվանդություններ:
Այդ ժամանակ ուսուցքներ չեն լինում, այլ գլխի ուղեղը
սկսում է լավ չգործել, նա կամաց կամաց թուլանում և

պակասում և հիվանդի հիշողությունը. մտավոր ընդունա-
կությունները սրեցոր պակասում են. գլխի ուղեղի այդ
տկարությունը գնալով ավելի զարգանում է. հիվանդը
զրկվում է հասկացողությունից. նա դառնում է կատար-
յալ կենդանի դիակ. հիվանդի կենդանությունը միայն
ուտել խմելու մեջն և, մնացածը նա չի հասկանում, չի
զիտակցում. մնացածը նրա համար գոյություն չունի, մե-
ռած է նրա համար: Այդ տեսակ հիվանդների միակ փըս-
կությունը մահն է, վորովհետև բժշկություն չկա:

Իսկ վորնուղեղի տկարությունը վորնուղեղի սատրին
մասի (գոտկատեղի մասի) փառումն է, ավելի շուտ չորու-
կը, վորը ոտսերեն կոչվում է сипухая сухотка:

Այս տեսակ հիվանդի մարմնի սատրին մասի գործա-
րանները բոլորն ել խանգարվում են. հիվանդը չի կարո-
ղանում քայլել, ազատ միգել. նրա վորտերը կամ փորի
միջի գործարանները յերբեմն սատրիկ ցավում են, և
սատրիկ տանջում հիվանդին:

Յերկու տկարություններն ել գլխի ուղեղինը և վոր-
նուղեղինը, անբուժել յեն և մատնում են հիվանդին սոս-
կալի տանջանքների:

ԶԱՆԱԶԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԼՏՃԱՌԸ

Բոլոր հիվանդներն ել չեն տառապում նկարագրած
վնասումներից. մեկի գլխի ուղեղն և տկարանում, վորից նա
ցնորվում է. մյուսի վորնուղեղն և չորուկ ստանում. յեր-
բորդը տեսողությունից և զրկվում, չորբորդը սրտի արա-
տից և հանկարծամահ լինում:

Այդ զանազանությունը բացատրվում է հետևյալով:
Յուրաքանչյուր մարդ ժառանգում է իր ծնողներից
նրանց գործարանների պակասությունները. ում ծնողնե-

ըր թույլ թոքեր են ունեցել, նրա թոքերն ել թույլ կլինեն. ում ծնողները թույլ սիրտ են ունեցել, նրա սիրտն ել ե թույլ:

Այդ պակասութիւնները ժառանգական պակասութիւններ են. բայց կան մարդիկ, վորոնք ծնողներից ստացել են առողջ գործարաններ, բայց փշացրել են, թուլացրել են նրանց իրենց վատ նիստ ու կացով, անբարոյական կյանքով, արբեցողութեամբ:

Այս վերջին պակասութիւնները ստացական պակասութիւններ են: Սիֆիլիսի մանրեները, արյան հետ շրջագայելով հիվանդի մարմնի զանազան մասերը, կանգ են առնում նախ և առաջ այն մասում, վորն ամենից թույլ ե. այդտեղ նրանք կիտվում են, բուն գնում և զանազան խանգարումների պատճառ դառնում:

Ժողովրդական առածն ասում ե՝ «վորտեղ բարակ ե, այնտեղ ել կտրվում ե», սիֆիլիսն ել հարվածում ե գործարաններից ամենաթույլը. նա քայքայում ե առողջութիւնը, մինչև վոր վնասում ե կյանքի համար կարևոր գործարաններից մեկն ու մեկը, վորից և մեռնում ե հիվանդը. կամ մի այլ հիվանդութիւնից վախճանվում ե նա ու ազատվում ցավի ճանկերից: Այն հիվանդը, վորը կանոնավոր բժշկվել ե, այդ խանգարումներից ազատ ե՝ իսկ ով չի բժշկվել, կամ բժշկվել ե կիսատ, միշտ ել պետք ե սպասի, վոր մեկ որ սիֆիլիսը հարվածելու յե իրան, ուստի յուրաքանչյուր հիվանդ պետք ե բժշկվի իր ժամանակին, վոր ազատ լինի յերրորդ շրջանի վնասներից:

ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ԵՐԶԱՆԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիֆիլիսի յերկրորդ և յերրորդ շրջանի զանազանութիւնը կայանում ե նրանում, վեր յերկրորդ շրջանի հի-

վանդը սաստիկ վարակիչ ե, նա կարող ե վարակել ամենքին, ում հետ շփում ունենա. նա կարող ե փոխանցել հիվանդութիւնը ժառանգաբար. և ժառանգը նույն խանգարումները կունենա, ինչ վոր սեռական ուղիով վարակվածը... մի խոսքով յերկրորդ շրջանի հիվանդը թունավոր ե, իսկ յերրորդ շրջանի հիվանդը վարակիչ չե, այդ շրջանում սպիրոխեաները կորցնում են իրենց ուժը և վարակելու ընդունակութիւնը:

Սիֆիլիսը վարակում ե միայն առաջին և յերկրորդ շրջանում, իսկ յերր անցավ յերրորդ փուլը, նա ել վարակիչ չե, թեև նորագոյն գրականութեան մեջ հիշատակված են և այդ շրջանում վարակված դեպքեր:

ՍԻՖԻԼԻՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Սիֆիլիսը ընթանում ե վերը նկարագրածի պես, բայց յերբեմն զանազան հանգամանքներից նրա ընթացքը վաստանում ե:

ԻՆՉԻՅ ԿԱՐՈՂ Ե ՎԱՏԱՆԱԼ ՍԻՖԻԼԻՍԸ.

1) հասակ. Սիֆիլիսի ընթացքի վրա մեծ ազդեցութիւն ունի հիվանդի հասակը, ընդհանուր կազմվածքը յեվ նրա նիստ ու կացը. յերիտասարդ հիվանդի սիֆիլիսը թեթեւ ե անցնում, իսկ ծեր հասակում վարակվածներինը շատ ծանր. ծերութեան զառամութիւնը խանգարում ե հիվանդին կտիվ մղել յեվ հաղթել հիվանդութեանը. ծերութեան հասակում կազմվածքի ինքնապաշտպանութեան միջոցները թուլացած են, ուստի յեվ հիվանդութիւնը հաղթում ե. այնպես վոր ծերութեան հասակում, որինակ՝ հիսուն տարեկան հասակում ստացած սիֆիլիսը շատ վատ յեվ շատ ծանր ընթացք ե ունենում:

2) ում կազմվածքը թույլ է, ով ուրիշ հիվանդություններ, որինսակ՝ թոքախտ ունի, նրա սիֆիլիսն ել շատ ծանր է ընթանում և շատ շուտ գետին գլորում հիվանդին:

3) Նույնպես ծանր է ընթանում նրանց սիֆիլիսը, վորոնք քայքայել են իրենց առողջությունը հարբեցողությամբ, զանազան գվարճությունների պատճառով անքուն գիշերներով, թուլացրել է իր կազմվածքը անառակ և անբարոյական վարքով...

Այս բոլորի կազմվածքը գրկվել է ինքնապաշտպանություն միջոցներից և ի վիճակի չէ դիմադրել սիֆիլիսին:

4 Յուրա յերկրում ապրողի և վատ սնունդ ու վատ բնակարան ունեցողի սիֆիլիսն ել ծանր է ընթանում:

ՍԻՓԻԼՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՐԻՇ ԶԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Կան հիվանդություններ, վորոնց վրա սիֆիլիսը շատ վատ ազդեցություն է թողնում, այսինքն՝ ծանրացնում է նրանց:

1) Սիֆիլիսով հիվանդի թոքերի բարբոքումը շեղվում է իր կանոնավոր ընթացքից և շատ շուտ մահվան պատճառ դառնում:

2) Սիֆիլիսով հիվանդի բժավոր տիֆը ավելի ծանր է անցնում, քան նրա, ով չունի սիֆիլիս:

Ինքը սիֆիլիսը հազվագյուտ դեպքերում է մահվան պատճառ դառնում. բայց այնպես քայքայում հիվանդի առողջությունը, վոր տկարը ուժ չի ունենում դիմանալ ամենահասարակ հիվանդություններին անգամ. իսկ լուրջ հիվանդությունները միշտ ել մահով են վերջանում:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՓԻԼԻՍ

ԻՆՉ ԲԱՆ Ե ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՓԻԼԻՍԸ.

Ժառանգաբար անցնում է յերկրորդ շրջանի սիֆիլիսը:

Սիֆիլիսով հիվանդ ամուսինների զավակը նույնպես հիվանդ է լինում սիֆիլիսով. չը ծնված զավակի վարակումը կոչվում է ժառանգական սիֆիլիս. ժառանգը կարող է վարակվել սիֆիլիսով իր ծնողներից յերկու տեսակ.

1) հայրը և մայրը հիվանդ են սիֆիլիսով ու գոյացնում են սիֆիլիսով հիվանդ զավակ. վորը յիվանդ և սիֆիլիսով ճենց իր սաղմնավորության որից.

2) ծնողները սիֆիլիսով հիվանդանում են ժառանգի սազմնավորումից հետո. ժառանգը գոյացել է ծնողների առողջ ժամանակը. հայրը տկարանում է սիֆիլիսով և վարակում է իր հղի կնոջը, վորից յեղ վարակվում է սրգանդում՝ գտնվող զավակը.

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՓԻԼԻՍԻ ՆՇԱՆՆԵՐՆ ՅԵՎ ԸՆԹԱՅԲԸ

Սիֆիլիսով հիվանդ յերեսան արգանդի մեջ չի աճում, շուտ մեռնում է և վիժվում:

Սիֆիլիսով յիվանդ հղի կանանցից 90% վիժում է յղիության կեսը չը լրացած, կամ ծնում՝ խստ, բայց մնում զավակ:

Այն կինը, վորը հաճախ վիժումներ է ունենում կամ մեռած զավակներ է ծնում, միշտեղ կասկածելի և սիֆիլիսի տեսակետից. և իրոք արյան քննությունը հաստատում է, վոր այդ կինը հիվանդ է սիֆիլիսով: Առողջ յերեսա ունենալու համար այդ կինը յերկար ժամանակ ու կանոնավոր պետքե բժշկվի:

Յեթե հիվանդութիւնը սաստիկ չէ, կենդանի է ծն-
վում յերեխան, բայց սիֆիլիսի նշաններով. նորածնի վրա
կան բշտիկներ, խոցիկներ. վոսկորներն ու մկանները լավ
չեն զարգացած. այդ տեսակ յերեխան միայն մի քանի
որ է ապրում և շուտ մեռնում է:

Փառանգական սիֆիլիս ունեցող յերեխաներից շատ
բջերն են հասնում 6 ամսական հասակը:

Յերբեմն յերեխան ծնվում է արտաքուստ առողջ,
բայց շատ շուտով հայտնվում են սիֆիլիսի նշանները,
խսկ և խսկ այնպես, ինչպես մեծերինը և շատ շուտ գրու-
րում նրան գերեզման:

Փառանգական սիֆիլիսով հիվանդ յերեխանները 90%⁰
մեռնում են: Փառանգական սիֆիլիսը կարող է յերեվալ
հիվանդ յերեխայի վրա և ավելի ուշ, նայած թե ծնողների
հիվանդութիւնը ինչ գրութիւն մեջ է. սրինակ՝ յեթե
ծնողների հիվանդանալուց հետո շատ ժամանակ է անցել
մինչև գալակի սաղմնավորումը, այն ժամանակ յերեխայի
հիվանդութիւնը կարող է հայտնվել ուշ, մի քանի ամսից,
կամ մի քանի տարուց հետո:

Փառանգական սիֆիլիսը կարող է հայտնվել մինչև
18-19 տարեկան հասակը. դրանից ուշ չի պատահում:

ՓԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՓԻԼԻՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Փառանգական սիֆիլիսով կենդանի մնացած յերե-
խան լավ չէ աճում, միշտ հիվանդ է լինում թե ֆիզիկա-
պես և թե հոգեպես, դրանց մեծ մասը հոգեկան հիվան-
դութիւններ են ստանում, աշխատելու ընդունակ չեն և
ապրում են իրենց ազգականների կամ պետութիւնի հաշիւին,
վորովհետև ընդունակ չեն ինքնուրույն կյանք վարելու:

Շատ հաճախ այդ տեսակ հիվանդներն հարրեցող են

զառնում կամ մի ուրիշ ախտամուր, մանավանդ բարոյա-
կան տեսակետից. նրանք հակումն են ունենում դեպի
անառակութիւնն ու անբարոյականութիւնը: Յուրաքան-
չյուր հիվանդ պետքն ունենա գիտակցութիւն՝ չը լծողնել
սիֆիլիսով հիվանդ ժառանգներ:

Յուրանքանչյուր հիվանդ պետք է ունենա գիտակցու-
թիւն նախ քան ամուսնանալը լավ բժշկվել ու հետո ամու-
սնալ. և իրոք ավելի լավ է չամուսնանալ, քան ունենալ
ժառանգական սիֆիլիսով հիվանդ զավակներ, վորոնք ա-
պագայում դառնալու են ընդ ծնողների, նասարակութիւն
յեվ պետութիւնի նամար:

Յուրանքանչյուր հիվանդ պետք է հասկանա, վոր իր
կողմից մեծ հանցագործութիւն է դեպի իր ժառանգը,
յերբ նա հիվանդ է ծնվում. ինչով է մեղավոր ժառանգը,
յերբ նրա անգիտակից ծնողները ավել են նրան սիֆիլիս:

Սիֆիլիսով հիվանդ իսրայնորը, ապուշը, բարոյապես
ընկածն ամենեվին մեղավոր չէ. նանցավորը ծնողներն
են, վոր սիֆիլիս են տվել իրենց ժառանգին:

ԻՆՉՊԵՍ ԶԳՈՒՇԱՆԱԼ ՍԻՓԻԼԻՍԻՑ

I ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԻՋՈՅՆԵՐ.

1) Գրագիտութիւն,

Սիֆիլիսի ամենամեծ թշնամին գիտութիւնն է. վոր-
քան շատ լուսավորված է, վորքան շատ կրթված է մի
ազգ, այնքան քիչ կան նրա մեջ սիֆիլիսով հիվանդներ:

Տգիտութիւն չնորհիվ է տարածվում սիֆիլիսը. գյու-
ղերում արտասերական սիֆիլիսի տարածման պատճառը
տգիտութիւնն է:

Յուրանքանչյուր գրագետ պետք է իմանա ինչ բան է

սիֆիլիսը, վորտեղից է նա ծագում, ինչպես է անցնում հիվանդից առողջին, ինչպես է նա անցնում ժամանազար, ինչպիսի ընթացք ունի յև ինչ հետևանքներ է տալիս նա:

Գրագետը գիտե, վոր սիֆիլիսը կարելի չէ ստանալ և վոչ սեռական հարաբերութեան միջոցով, վոր սիֆիլիսը կենցաղային հիվանդութիւնն է, նա կաշխատի զգուշանալ և հեռու մնալ այն ամենից՝ ինչ կասկածելի չէ:

Տգետը վախենում է հասարակ բանից, բայց ուշադրութիւն չի դարձնում լուրջ հիվանդութեան վրա:

Գրագետը, վորն ունի հասկացողութիւն սիֆիլիսի մասին, ի վիճակի կը լինի ջոկել իսկականը հասարակից և վտանգավորը անվտանգից:

2) Պայքար պոռնիկութեան դեմ:

Սիֆիլիսի յեվ առհասարակ վեներական ախտերի զլիսավոր աղբյուրը, պոռնիկութիւնն է դադանի յեվ հայտնի: Անգործ կանայք և անապաստան յերեխաները, անտեսական սուղ պայմաններից ստիպված, կարիքից ստիպված, դուրս են գալիս փողոց հաց աշխատելու ու իրենց գոյութիւնը պահպանելու համար ծախում են իրենց մարմինը: Իսկ այդ արհեստի անբաժան ընկերը վեներական ախտերն են: Պոռնիկութեան դեմ մղվող պայքարի մեջ առաջին տեղը բռնում է անգործ կանանց և անապաստան յերեխաների խնամատարութիւնը. վորպէսզի հացի համար փողոց չը նետվեն, պետք է խնամել նրանց և գործի գնել:

3) Պայքար արբեցողութեան դեմ:

Սիֆիլիսի յեվ առհասարակ վեներական ախտերի գինակիցը, ոգնականը—արբեցողութիւնն է: Արբեցողը շատ անվայել քայլեր է անում: Վեներական ախտերով

մեծ մասամբ վարակվում են արբած ժամանակ. ուստի պետք է լուրջ կերպով կովել արբեցողութեան դեմ:

4) Պայքար սեռական սանձարծակութեան դեմ:

Սեռական ազատութիւնը յերբեմն սանձարծակութեան է հասնում: Սեռական կյանքը շատ վաղ են սկսում. մինչև անգամ վոչ հասունացածներն ունենում են հաճախակի հարաբերութիւն: Ունենում են հարաբերութիւն մինչև անգամ պոռնիկների հետ և վարակվում ամեն տեսակ ախտով. դրա դեմ կովելու համար հարկավոր է դպրոցներում յերկու սեռի միատեղ ուսումը սկսել շատ փոքր հասակից. ուսումնարանի բարձր դասարաններում և բարձրագույն դպրոցներում պիտի լուրջ ուշադրութիւն դարձնել սեռական կրթութեան վրա:

II ԱՆՁՆԱԿԱՆ ԶԳՈՒՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.

Այս միջոցները կայանում են չորս պատվերի մեջ և յուրանբանչյուր զրագետ պետք է մտքին պահի հետեյալ չորս պատվերները:

1) Յեղիւր ժուժկալ մինչև ամուսնութիւնն:

2) Յեղիւր մաքուր ամուսնութիւնիցդ հետո:

3) Յեղիւր զգուշ սիֆիլիսով վարակվելուց:

4) Յեղիւր գիտակից՝ բժշկվել, յեթե հիվանդ ես եվ ուրիշին մի վարակիլ:

Յեթե յուրանբանչյուր մարդ գեկավարվի սրանցով, այն ժամանակ սիֆիլիսը գոյութիւն չի ունենա:

III ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ ԶԳՈՒՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Սիֆիլիսով հիվանդ հղի կանայք պետք է բժշկվեն հղի ժամանակ, վոր առողջ յերեխա ծնեն:

Հղի կինը բժշկվելիս—բժշկվում է արգանդի մեջ
և նրա գավակը: Սիֆիլիսի դեմ գործ դրված ճարերը հղի
կնոջ արյան միջոցով անցնում է արգանդի մեջ գտնվող
գավակին ու նրան ևս բժշկում:

IV՝ ԱՐՏԱՍԵՌԱԿԱՆ ՍԻՓԻԼԻՍԻ ԶԳՈՒՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Ինչպես վերն ասացինք սիֆիլիսը անցնում է և վոչ
սեռական ուղիով. այդ հարցում մեծ նշանակություն ու-
նի ազգաբնակչության նիստ ու կացը:

1) ՍԵՆՅԱԿ

Տնտեսական վատ դրությունից մեկ սենյակում ա-
պրում են ավելի մարդ քան հարկավոր է:

Յեթե մեկ սենյակում ապրող բազմամեծամ ընտանի-
քի անդամներից մեկն ու մեկը հիվանդ է սիֆիլիսով, աը-
գիտություն և նեղվածություն պատճառով ախար շատ
շուտ տարածվում է և ուրիշների վրա.

Յուրաքանչյուր հիվանդ ինքը պետք է գիտակցու-
թյուն ունենա և զգուշ լինի, վոր ուրիշներին չը վարակի:

2) ԱՆԿՈՂԻՆ, ՈՒՏԵԼԻՔ ՅԵՎ ԽՍԵԼԻՔ

Գյուղերում սովորություն կա ընտանիքի բոլոր ան-
դամները մի անկողնում են քնում, ուտում են մի ամա-
նից, մի գդալով, խմում են մի բաժակից, համբուրում
են հիվանդ յերեխաներին կամ հիվանդը համբուրում է
առողջ յերեխային, սրբվում են մեկ սրբիչով և այն...
և այս բոլորը նպաստում է սիֆիլիսի տարածմանը:

Բավական է մի գյուղում մի ընտանիք հիվանդ լի-
նի ու այդ ընտանիքից ամբողջ գյուղը կարող է վարակ-
վել.

Ահա կյանքից մի Չ որինակ.

1) մեկը գնում է մի գյուղ և հյուր մնում մեկի տա-
նը. այդ հյուրը հիվանդ է սիֆիլիսով և այնել ամենավարակիչ
ըրջանի. այդ հյուրը առանց հասկանալու, վոր իր հիվան-
դությունը վարակիչ է, համբուրում է տան տիրոջ յերե-
խաներին, կամ ուտում է բոլորի հետ մի գդալով, վորի
վրա թողնում է իր թուփի մի կաթիլը. նրանից հետո գը-
դալն առանց լվալու ուտում են ուրիշները յեվ վարակ-
վում. նրա համբուրած յերեխաներն ել նույնպես վարակ-
վում են. այս վարակվածներն ել վարակում են իրենց հա-
րևաններին և այդպիսով ամբողջ գյուղը գլխովին վարակ-
վում է սիֆիլիսով.

2) Գյուղացու մեկը քաղաքում վարակվել է սիֆիլի-
սով և դեռ կարգին չը բժշկված, գնում է գյուղ. նա
հենց առաջին որը կնոջն է վարակում ու հետո արտասե-
ռական ճանապարհով իր յերեխաներին. իսկ այդ ընտա-
նիքից վարակվելու յեն և մյուսները շնորհիվ իրենց ան-
մաքրասիրության և ագիտության:

3 ԳԼԱՆԱԿ, ԾԽԱՄՈՐՃ

Արտասեռական սիֆիլիսի տեսակետից մեծ նշա-
նակություն ունի և ուրիշի կիստա գլանակ ծխելը, կամ
ծխամորճ (չիբուխ) քաշելը: Հիվանդը թողնում է գլանա-
կի կամ ծխամորճի վրա իր թուփի կաթիլը, և անգիտակ-
ցաբար վարակում ուրիշ առողջին, վորը գրել է իր բերա-
նը հիվանդի կիստա գլանակը, կամ նրա ծխամորճը:

Ուրեմն յուրաքանչյուր գիտակից մարդ պետք է գը-
զուշ լինի ուրիշի գլանակից, ծխամորճից, բաժակից,
սրբիչից, գդալից, ամանից, անկողնուց, թաշկինակից ու
շորերից:

Յուրաքանչյուր մարդ պիտի իմանա, վոր սիֆիլիսն անցնում է վոչ թե միայն սեռական հարաբերության միջոցով, այլ յեզ համբուլրի, գգալի, բաժակի միջոցով:

4) ԻՐԵՐ

Բացի այդ ամեն մարդ պիտի լավ իմանա, վոր սիֆիլիսն անցնում է հիվանդից առողջին և այլ իրերի միջոցով, վորոնց վրա է ընկել սիֆիլիսով հիվանդի թուքի կամ նրա թարախի մի կաթիլը:

Ամեն մարդ պետք է շատ լավ իմանա, վոր թե սեռական ճանապարհով ստացած սիֆիլիսը, և թե վոչ սեռական ճանապարհով ստացած սիֆիլիսը միևնույն ընթացքն ունեն, վոր յերկուսն ել վտանգավոր են, վոր նույնպես վտանգավոր է և զանազան իրերի միջոցով ստացած սիֆիլիսը:

Սիֆիլիսը մեկ է, վորովհետեւ մասերն մեկ է: Այդ պատճառով ել պետք է շատ զգուշ լինել և հսկել, վոր յերեխաները բերանը չը դնեն զանազան խաղալիքներ, վորոնց վրա կարող է ընկած լինի սիֆիլիսոտի թուքի մի կաթիլը,

Նմանապես կար անող կանայք կամ հյուանները չը պետք է բերանը դնեն ասեղ, քորոց, մեխ և այլ իրեր...

Սիֆիլիսից զգուշանալու համար հարկավոր է միշտ լավ լվանալ ու մաքրել այն բոլորը, ինչի ձեռք է ավել մի ուրիշը, թեկուզ առողջը. առանց լվանալու չը խմել ուրիշի բաժակով, չուտել ուրիշի գգալով, ուրիշի ամանից և այլն...

Մաքրասեր ընտանիքում արտասեռական սիֆիլիս չկա:

ՍԻՖԻԼԻՍԻ ԲՈՒԺՈՒՄԸ

ՍԻՖԻԼԻՍԸ ԲՈՒԺԵԼԻ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ե

Շատ վաղուց տարածված էր այն սխալ կարծիքը, վոր սիֆիլիսն անբուժելի է, բայց զիտությունը ջախջախեց այդ սխալ կարծիքը. այժմ գրականապես հայանի յե, վոր սիֆիլիսը բուժելի յե, մրայն պետք է բուժումը կատարել իր ժամանակին յեզ ըստ պատշաճի:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է լավ իմանա, վոր բուժելի յե սիֆիլիսը. նա չպետք է բարձաթող անի իր ախարությունը և պետք է աշխատի ամեն միջոց գործ դնել այդ ախտից ազատվելու համար:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է բժշկվի՝ 1) իր կուրցրած առողջությունը նեղ բերելու նամար, 2) իր նարագատներին յեզ մերձավորներին չը վարակելու նամար. յեզ 3) առողջ ժառանգներ ունենալու նամար:

ՏԵՎԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ

Սիֆիլիսը յերկարատե հիվանդություն է, յերկար ժամանակ է պահանջում և նրա բուժումը. ուստի հիվանդը պետք է համբերություն ունենա բժշկվելու համար:

Ուլ ժամանակին չի բժշկվում, ուլ կիսատ է թողնում, ապագայում տուժում է իր անփութության համար:

1 ՍԻՖԻԼԻՍԸ ԱՐԱՏ ՉԷ

Վոչ վոր չըպետք է փախչի սիֆիլիսով հիվանդից: Սիֆիլիսը արատ չէ, այլ հիվանդություն:

Սիֆիլիսով հիվանդը արատավոր չէ, այլ գժբաղտ, վորը վոչ թե անարգանքի է արժանի, այլ կարոտ է կարեկցության և բժշկության:

II ՎԱՂ ԲՈՒԺՈՒՄԸ

Սիֆիլիսի բուժումը պետք է լինի խիստ կանոնավոր, և պետք է սկսել վորբան կարելի է շուտ հենց կոշտ շանկրից, վոր սպիրոխեաները շատ չը տարածվեն մարմնի մեջ և չը բազմանան. հիվանդը չը պետք է թաղցնի իր հիվանդությունը, չը պետք է ամաշի նա իր ախտից, այլ պետք է բժշկվի:

Սիֆիլիսը շատ շուտ տեղի է տալիս բուժմանը:

Վոչ մի հիվանդության նշաններ այնպես շուտ չեն անհետանում բժշկվելիս, ինչպես սիֆիլիսինը:

Սիֆիլիսի մի հատկությունն էլ դա է, վոր բժշկվելիս նրա նշանները շատ շուտ անցնում են. սպիրոխեաները շատ շուտ անհետանում են արյան միջից, յերբ սկսում են բժշկվելը, մանավանդ յերբ վարակվելու տեղից ու նրան մոտակա գեղձերից հեռու չեն գնացել նրանք:

Արանից 20-25 տարի առաջ հակասիֆիլիսային հատուկ բժշկությունը սկսում էին միայն այն ժամանակ, յերբ հայտնվում էին սիֆիլիսի յերկրորդ շրջանի նշանները:

Բայց գիտությունը, վերջին տարիների ուսումնասիրությունները պարզեցին, վոր ինչքան շուտ սկսվի բժշկությունը, այնքան լավ: Յեվ այժմ բժշկությունը սկսում են հենց առաջին շրջանից՝ կոշտ շանկրի ժամանակ, յերբ սպիրոխեաները—սիֆիլիսի մանրենները, շանկրից հեռու չեն ու քիչ են: Փորձերն ապացուցեցին, վոր յերբ կոշտ շանկրի ժամանակին սկսում հակասիֆիլիսային բժշկությունը, հիվանդության յերկրորդ շրջանը չի հայտնվում և յերբեմն ամբողջ բժշկությունը հենց մի ամսում էլ վերջանում է:

ՍԻՖԻԼԻՍԻ ԴԵՄ ԳՈՐԾԱԴԻՎՈՂ ՄԷՋՈՅՆԵՐԸ:

Դեռ շատ վաղուց հայտնի էր սնդիկի (սուլեմի) ազդեցությունը սիֆիլիսի վրա. սկզբներում ծուխ էին տալիս հիվանդներին. այժմ էլ հեքիմներն այդպես են բժշկում, բայց այժմ այդ ձևը թողել են և սնդիկը կաշվի տակ են ներարկում, կամ մկանների մեջ են սրսկում:

Մարդկային միտքը չը բավականացավ զբանով և սիֆիլիսի բուժման հարցում նոր նվաճումներ արեց. այդ խնդիրը տարեց-տարի նոր նվաճումներ է անում, այդ պատճառով էլ այժմ սիֆիլիսը առաջիկա պես անելի հիվանդության չէ. այժմ նա ի վիճակի չէ կոտորածներ անելու. այժմ նա լավ ուսումնասիրված է և գտնված են նրա դեմ արմատական միջոցներ:

Շատ ու շատ փորձեր են արված, շատ ճարեր են գտնված. կատարելագործված են թե ճարերը և թե նրանց գործածելու ձևը, բայց սնդիկը մնացել է դեռ իր պատվավոր տեղում:

ՄՆԴԻԿ ՅԵՎ «914»

Այժմ սնդիկը մկանների մեջ կամ կաշվի տակ են ներարկում և արյան մեջ էլ ներարկում են «914» (նեոսարվաբան). մի ամիս այդպես բժշկելուց հետո 2 ամիս ընդմիջում են անում և նորից սկսում են բժշկությունը, վորը նույնպես մի ամիս է տևում. դրանից հետո ևս ընդմիջում. և այդպես ընդհատումներով մի քանի կուրս են անում:

Ի Ո Գ

Շատ ոգտակար է և իողը. սիֆիլիսով հիվանդը, մանավանդ յերրորդ շրջանում, ընդունում է իող, վորի չափը վորոշում է բժիշկը:

ՅԵՐԲ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՌՈՂՋԱՅԱԾ ՀԱՄԱՐԵԼ ՀԻՎԱՆԳԻՆ

Վերջին ասեղից 3-4 ամիս հետո արյունը տալիս են հետազոտութեան, յեթե արյան մեջ կան սիֆիլիսի հետքեր, նորից են սկսում բժշկութեանը, իսկ յեթե չը կան սպասում են. մի քանի ամսից հետո նորից են տալիս արյունը հետազոտութեան: Մի քանի անգամ արյան քննութեանից բացասական պատասխան ստանալուց հետո պետք է վողնուղեղի հեղուկը տալ հետազոտութեան. յեթե վողնուղեղի հեղուկի հետազոտութեանը դրական հետեանք է տալիս, պետք է շարունակել բժշկութեանը, իսկ յեթե արյան կրկնակի հետազոտութեանը, վողնուղեղի հեղուկի հետազոտութեանը բացասական հետեանք են տալիս, այն ժամանակ կարելի է հաստատապես ասել, վոր հիվանդն առողջացած է և նա վոչ մի վտանգ չի սպառնում իր շրջապատողներին: Այդ ժամանակ միայն նա կարող է ամուսնանալ:

Ով բժշկվել է իր ժամանակին և կանոնավոր կերպով, նա կարող է ազատվել սիֆիլիսի ճանկերից. հակառակ դեպքում փրկութեան չկա:

Սիֆիլիսը արատ չէ, այլ հիվանդութեան, վորը բժշկվել է պահանջում և վոչ թաղցնել

Ընթերցող չը մոռանալ չորս պատվերները:

- 1) Յեղիք ժամկալ մինչև ամուսնութեանը:
- 2) Յեղիք մարտը ամուսնութեանիցը հետո:
- 3) Յեղիք զգույշ սիֆիլիսով վարակվելուց:
- 4) Յեղիք գիտակից՝ բժշկվիր. յեթե հիվանդ ես յե՛վ ուրիշին մի վարակիր:



7500/1